



ՈՐԴԱՆ (ԿԱՐՄԻՐ)

ԿԱՄ

KIRMIZ

ՀԱՅ գեղարուեստով մանաւանդ գորգաշինութեան արուեստով հետաքրքրուողը անկարելի է որ չհանդիպի Որդան (Կարմիրին) կամ ինչպէս որ օտարներու ծանօթ է՝ Kirmizին: «Շատ շահեկան պիտի ըլլար որդան կամ որդան կարմիր կոչուած այսինքն որդերէ բազաղրուած այդ գոյնին վրայ տեղեկութիւններ պրպտել Հայկական աղբիւրներուն մէջ»¹:

Նախ և առաջ ըսեմ՝ թէ Որդան կարմիր ձեւը սխալ կը նկատեմ, և միայն Որդանը կը բաւէ նշանակութիւնը հասկցնելու համար: Այս մասին իմ պատճառներս և պարզումներս իրենց կարգին ուսումնասիրութեանս ընթացքին ցոյց պիտի տամ: Այս նպատակաւ է որ աշխատութեանս միջոցին ամէն անգամ որ Որդան կարմիր ընդունուած բայց սխալ ձեւը գործածած եմ՝ կարմիրը տեղաւորած եմ փակագիծներու մէջ, իսկ մէջբերումներուս մէջ իրենց եղած կերպովը թողուցած եմ:

Որդանին մասին զրոյ Հայ թէ օտար մասնագէտ և ոչ մասնագէտ զրոյներու մօտ Հայկական Որդանը շփոթուած է և սխալ բացատրուած ու հասկցուած: Այս շփոթութիւնները պարզելու համար նախ պէտք է որ թէ՛ բուն և թէ՛ կարծեցեալ միջատին և միջատներուն ծանօթանանք:

«Որդան կարմիր: - Նկարչութեան արուեստի գեղեցկագոյն զարդուց մին, որոյ գործածութիւնն շատ յաճախեալ էր հիներու քով և այժմ գրեթէ թողուած ձգուած անգործութեան մէջ. իւր գնոյն բարձրութեան համար միայն՝ էր այն կարմիր գոյնն զոր կը հանէին այս փոքրիկ միջատէս»:

«Որդան կարմիրոյ արուն՝ որ կը գանգանի էգէն նախ և առաջ իւր մարմնոյն փոքրկութեամբը համեմատելով էգին հետ, երկրորդ իւր թեւերովն՝ յորոց էգը բոլորովին զուրկ է, երրորդ՝ զլիսոյն վրայ ունեցած երկու եղջերիկներուն աղուամազիւք ծածկած լինելովն, և չորրորդ՝ պոչին վրայ ունեցած երկու մագերովն՝ որոց երկայնութիւնն քանի մ'անգամ կ'առաւելու քան զբովանդակ երկայնութիւն մարմնոյն, և որք զգալի կերպով որչափ որ կ'երկըննան այնչափ եւս իրարմէ կը հեռանան, ձեւացնելով այսու իրենց միութեան կէտին վրայ սուր անկիւն մի»:

«Իսկ էգն որ և կարեւորագոյնն է և ուստի կը հանուի որդան կարմիր կոչուած

1. «Կոչնակ», շաբաթաթերթ, Նիւ Եօրք. 1920, էջ 367. «Հայկական Գորգերը», Արտատպուած Կ. Պոլսոյ «Շանթ» շաբաթաթերթէն, 1929, Հեղինակ Ա. (Բմնակ) Ս (ազգեան):